ՈՐՈՇՈՒՄ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 05 սեպտեմբերի 2007 թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 1-ին
դատական կազմը
Նախագահությամբ՝ Վ.Հովհաննիսյանի
Անդամակցությամբ՝ Հ.Դանիելյանի և Ռ.Պապայանի

Քննության առնելով Արտակ Զեյնալյանի դիմումի ընդունելիության հարցը,

ՊԱՐԶԵՑ

Քաղաքացի Արտակ Զեյնալյանը դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխի սահմանադրականությունը:

Ներկայացված դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1 մասի 6 կետի, Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 27, 28 հոդվածների եւ 69 հոդվածի 1, 2, 4, 5 կետերի, ինչպես նաեւ ՀՀ Սահմանադրական դատարանի Կանոնակարգի պահանջներին:

Պահպանվել է Սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով նախատեսված ժամկետը:

Դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ գտնում է, որ իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրությանը:

Գործում առկա է պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 69 հոդվածի 6-րդ կետով՝ Սահմանադարական դատարանի 1-ին դատական կազմը

ՈՐՈՇԵՑ

Ա. Զեյնալյանի դիմումը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխի սահմանադրականությունը վիճարկելու մասին, ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող ճանաչել ՀՀ Ազգային ժողովին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՐՈՒԹՅՈՒՆ